

Հաստատում եմ՝ 2 մայիսի 2023 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարզն Սերգեյի



ԿԱՐՇԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Էլեն Սամվելի Ավետիսյանի

«Ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունն անգլերենի ուսուցման գործընթացում» ԺԳ. 00. 02.

«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Համապատասխան մանկավարժական, լեզվաբանական, մեթոդական աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորմանը և զարգացմանը նվիրված հետազոտություններում քննության են առնվում հիմնականում միջմշակութային և բազմամշակութային կրթությանն առնչվող հարցեր: Սակայն ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորմանը և զարգացմանը վերաբերող բազում հարցեր անհարժեշտ մակարդակում լուծված չեն: Կարելի է պնդել, որ սույն աշխատանքում ուսումնասիրված է արդիական գրականություն, բավականին բարձր մեթոդաբանական մակարդակում են մշակված հանրամշակութային վարժությունների, հանրամշակութային բնույթի սխալների, հաղորդակցական ձախողումների հաղթահարման վարժություններն ու առաջադրանքները:

Հետազոտության արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ հեղինակի կողմից մշակված է ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի շարունակական զարգացման, համապատասխան տեքստերի և այլ ուսուցման միջոցների ընտրության, արդյունավետ վարժությունների համակարգ, քննության են առնված հետազոտության հիմնախնդրին վերաբերող տեսական, մեթոդաբանական աշխատանքները, իրականացված է փորձարարական ուսուցում, որի ընթացքում հիմնավորվել է առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Ճիշտ և հստակ են ձևակերպված հետազոտության օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության եզրակացությունները համապատասխանում են նրա առաջադիր խնդիրներին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 146 էջ: Ատենախոսության թեմայով տպագրված են 8 գիտական աշխատանք:

Առաջին «Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման բովանդակային և գործառական առանձնահատկությունները» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին «Սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի հիմնական բաղադրիչները» խորագրով ենթագլխում ատենախոսը հստակեցնում է հետազոտության հասկացական ապարատը, բացահայտում է մշակութային, միջմշակութային, հանրամշակութային կոմպետենցիաների տարբերությունները և ընդհանուր կողմերը, բաղադրիչային վերլուծության է ենթարկում «հանրամշակութային կոմպերենցիա» հասկացությունը:

Երկրորդ «Գրական-գեղարվեստական տեքստը որպես սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման միջոց» ենթագլխում էլեն Ավետիսյանը քննության է առնում գեղարվեստական տեքստի շուրջ աշխատանքի հիմնահարցերը, որոնք առնչվում են ավագ դպրոցականների



հանրամշակութային կոմպետենցիայի զարգացմանը: Նա կոնկրետ ստեղծագործությունների օրինակով կարողանում է հիմնավորել գեղարվեստական բնագրում ազգային նշույթավորված և մշակութային-նշույթավորված բառապաշարի շուրջ աշխատանքի արդյունավետությունը: Նա ընդհանուր բնութագրերով ներկայացնում է էքստենսիվ ընթերցանության առանձնահատկությունները սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման տեսանկյունից:

Երրորդ «Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման ռազմավարությունները» ենթազիխում ատենախոսը ներկայացնում է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունները: Նրան հաջողվում է անգլերենի ուսուցման տարբեր փուլերում վերլուծել վերձանաչողական, ճանաչողական, հաղորդակցական, հուզական, փոխհատուցող, համեմատական և գրաֆիկական ռազմավարությունները և հիմնավորել դրանց կիրառման անհրաժեշտությունը: Հետազոտության նորույթներից մեկն այն է, որ ատենախոսը փորձում է ներկայացնել համապատասխան հանրամշակութային երևույթները ոչ միայն սովորողների լեզվական աշխարհի, այլև նրանց աշխարհի հասկացութային պատկերի ձևավորման տեսանկյունից:

Չորրորդ «Հաղորդակցական ձախողումների հաղթահարման հանրամշակութային հայեցակերպը» ենթազիխում ներկայացնում է հանրամշակութային բնույթի հաղորդակցական ձախողումների բովանդակությունը, պատճառները, դրանց հաղթահարման ուղիները :

Երկրորդ «Ավագ դպրոցականների հանրամշակութային կոմպետենցիայի իայի ձևավորման եվ զարգացման մեթոդական համակարգը և նրա արդյունավետության փորձարարական հիմնավորումը» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթազիխից: Առաջին «Անգլերենի հանրամշակութային բառապաշարի ուսուցման ռազմավարությունները» ենթազիխում Էլեն Ավետիսյանը վերլուծում է անգլերենի հանրամշակութային բառապաշարի ուսուցման այն ռազմավարությունները, որոնք արդյունավետ է կիրառել ավագ դպրոցի անգլերենի ուսուցման հումանիտար

հոսքում: Նորույթ է այն, որ հեղինակը շեշտը դնում է հատկապես ոչ համարժեք բառապաշարի ուսուցման ռազմավարությունների մշակման վրա:

Երկրորդ «Ավագ դպրոցի անգլերենի դասագրքերի բովանդակության հանրամշակութային բաղադրիչը» խորագիրը կրող ենթագլխում ատենախոսը բովանդակային լուրջ վերլուծության է ենթարկում ավագ դպրոցի անգլերենի դասագրքերը: Հաջողված են հատկապես դասագրքերի ստեղծման ավանդական և ժամանակակից սկզբունքներին վերաբերող բաժինները: Ավելին, նա քննության է առնում հատկապես նշված դասագրքերի հանրամշակութային բաղադրիչը: Դա վերաբերում է հատկապես ազգամշակութային նշույթավորում ունեցող, անհամարժեք բառապաշարին:

Երրորդ «Հանրամշակութային կոմպետենցիայի ձևավորման և զարգացման վարժությունների համակարգը» ենթագլխում ատենախոսը առաջակում է սովորողների հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման վարժությունների համակարգը: Հետազոտության նորություններից մեկն այն է, որ նա առաջարկում է փուլային վարժությունների համակարգ, որի ամեն մի բաղադրիչը լրացնում է մյուս բաղադրիչներին: Այստեղից հետևում է, որ ֆիլմի շուրջ աշխատանքը լրացնում է այն բացը, որ առաջանում է երգի շուրջ աշխատանքի ընթացքում: Երգի շուրջ աշխատանքը լրացնում է տեքստի շուրջ իրականացվող աշխատանքը: Փաստորեն ֆիլմի, երգի, տեքստի շուրջ աշխատանքի համար ընտրված վարժությունները կատարվում են փոխլրացման սկզբունքով:

Փորձարարական ուսուցման ընթացքում ատենախոսը կիրառել է հանրամշակութային կարողունակությունները զարգացնող տարբեր հնարներ: Դրական է այն, որ վարժություններն ընտրվել են ըստ այդ հնարների կիրառման ընթացակազմերի և բովանդակության:

Նորույթ է այն, որ ատենախոսի կողմից մշակվել են նախադեպային տեքստերի յուրացմանը միտված վարժությունները: Ավելին, նա շեշտադրում է այլ մշակույթներն դրական հույզերով և զգացմունքներով ընկալելու հնարի կարևորությունը:



Դրական է նաև այն, որ աստենախոսը կարևորում է ուսուցողական նպատակով հատկապես խոսակցական լեզվակադապարների ուսուցման դերը: Առաջադրանքների բովանակության տեսանկյունից դրական է աստենախոսի մոտեցումը շեշտը դնել ոչ միայն տեղակտվական, այլև մտային բացերի լրացման վրա: Դա նրան հնարավորություն է տալիս կիրառել ըստ անհրաժեշտության բազմաբնույթ և բազմաբովանդակ գծագրական դասակարգիչներ:

Ընդհանուր առմամբ իրականացված է բավականին օգտակար, արդիական, նորույթ պարունակող աշխատանք: Սեղմագիրը և հոդվածները համապատասխանում են աստենախոսության բովանդակությանը: Աստենախոսությունը և հոդվածները շարադրված են գրական, գիտական ժանրին համահունչ հայերենով: Տարբեր սկզբաղբյուրներից վերցրած օրինակները տիպական են, օգտագործված են տեղին և հստակորեն լուսաբանում են ներկայացված տեսական դրույթները:

Կարծում են որոշ նկատառումներ կօգնեն աստենախոսին նորովի մոտենալ քննարկման ենթակա հարցերին.

1. վարժությունների համակարգը մշակելիս, ճիշտ կլիներ հստակեցնել ֆիլմ, երգ, տեքստ հարաբերակցությունը, այն առումով որ պետք է վարժությունները ներկայացնել պարզից դեպի բարդ, հեշտից դեպի դժվար սկզբունքներով:

2. աշխատանքը կշահեր, եթե շեշտը դրվեր կարճամետրաժ ֆիլմերի, կարճ պատմվածքների ընտրության վրա, քանի անգլերենին հատկացվող ժամաքանակը բավարար չէ լիամետրաժ ֆիլմեր դիտելու համար: Գաղտնիք չէ, որ արտադասարանային աշխատանքը նույնպես ժամաքանակի առումով անսահմանափակ չէ:

3. կարելի է լրացուցիչ պարզաբանել, թե ինչու է գործաբանական տեքստի շուրջ աշխատանքը զարգացում սովորողների հանրամշակութային կոմպետենցիան:

4. հավելվածում տեղ գտած որոշ օրինակներ կարելի էր դարձնել քննության առարկա:

Այսպիսով, Էլեն Սամվելի Ավետիսյանի «Ավագ դպրոցականի հանրամշակութային կոմպետենցիայի զարգացման ռազմավարությունն անգլերենի ուսուցման գործընթացում» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲՈԿ-ի կողմից ԺԳ. 00. 02. «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր կողմից հայցած գիտական աստիճանին:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2023 թվականի մայիսի 2-ին կայացած N7 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա. Միմոնյանը, Բ.Գ.Պ., դոցենտ Ս. Սարինյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ն. Թովմասյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Թումանյանը, մ.գ.թ., դոցենտ Ռ. Խաչատրյանը, մ.գ.թ. Ա. Սայամյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝  
Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և  
միջմշակութային հաղորդակցության  
ամբիոնի վարիչ,  
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Ա. Ա. Միմոնյան

Հաստատում եմ՝ 2 մայիսի 2023թ.

Գիտքարտուղար, Բ.Գ.Թ.

Ռ. Ս. Կասաբարովա